# ՅՈՐԴԱՆԱՆԻ ԹԱԳԱՒՈՐԷՆ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ

*Յորդանանի Վեհափառ Հիւսէյն Թագաւոր իր անձնական գնահատութիւնը կը յայտնէ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց Միաբանութեան որ կատարած է ընտրութիւնը հանգուցեալ Եղիշէ Արքեպս. Տէրտէրեանի յաջորդին։*

*Նորին Վեհափառութիւնը իր շնորհաւորանքը և բարի մաղթանքները կը յայտնէ Ամենապատիւ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանին, ընկերակցաբար այս բարձր պաշտօնին ընտրուած ըլլալուն համար, Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան բացարձակ մեծամասնութեան քուէներով։*

*Երուսաղէմ հաստատուած Հայ Պատրիարքը աւանդաբար Հոգևոր Պետն է Սուրբ Երկրի և Յորդանանի մէջ ընակող հայերուն։*

*Յորդանանի Թագաւորը նաև յաջողութիւն կը մաղթէ Ամենապատիւ Պատրիարքին, ձեռնարկելու համար իր ազնիւ նպատակները և առաջադրութիւնները ի ծառայութիւն մեր ցանկալի երկրին մէջ ապաստանած հայկական համայնքին բարգաւաճման։ Ծառայութիւն մը՝ որ ներշնչուած պիտի ըլլայ գլխաւորաբար եղբայրութեան և հանդուրժողութեան սկզբունքներէն, մեր երկրին մէջ ընակող բոլոր համայնքներուն և հաւատացեալներուն մէջ անխտիր։*

*Ժամանակ մը առաջ, Մայիս 15ին, Պատրիարքարանի գահլիճին մէջ, Կրօնական Գործոց Նախարար Զէյֆուլան Համէր Նորին Ամենապատուութեան ներկայացուցած էր իր Կառավարութեան պաշտօնական ճանաչումը։*

*Հիւսէյն Թագաւորի պաշտօնագիրով Երուսաղէմի 96րդ Հայ Պատրիարքի Գահակալութեան ձեռնարկը կը հարթուի, որ կը ծրագրուի կատարել Հոկտեմբեր 27 և 28 շաբաթավերջին, մասնակցութեամբ Հայաստանեայց Եկեղեցւոյ ղեկավար առաջնորդներուն։*

*Հեռաւոր Աւստրալիայէն և Հարաւային Ամերիկայէն ներկայացուցիչներու մասնակցութիւնը կ'ակնկալուի գահակալութեան արարողութեան, որ վերջին անգամ տեղի ունեցաւ երեսուն տարի առաջ, երբ Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան եղաւ 95րդ Հայ Պատրիարքը Երուսաղէմի։*

*Գահակալութեան առթիւ Երուսաղէմ այցելող ներկայացուցիչներու Թեմական Առաջնորդներու կարգին կ'ակնկալուի ներկայութիւնը Գերշ. Տ. Խաժակ Ծ. Վրդ. Պարսամեանին, որ Հիւսիսային Ամերիկայի Արևելեան Թեմի Առաջնորդ ընտրուեցաւ, յաջորդելով Նորին Ամենապատուութիւն Թորգոմ Պատրիարք Մանուկեանի։ Խաժակ Ծ. Վրդ. Պարսամեան եպիսկոպոս պիտի օծուի Հոկտեմբեր 7ին, ձեռամբ Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարին մէջ։*

*Պատրիարք Սրբազանը իր շնորհակալութիւնը Յորդանանի Հիւսէյն Ա. Թագաւորին յայտնած է հետեւեալ նամակով. —*

His Royal Hashemite Majesty
King Hussein Ben Talal
May God Preserve Him

Jerusalem, August 8, 1990

Your Majesty,

We have the honour to present to Your Majesty our deep loyalty and most sincere wishes.

With gratitude we have received the felicitations and blessings of Your Majesty on the occasion of our election as the Armenian Orthodox Patriarch of Jerusalem, succeeding the late Patriarch Archbishop Yeghishé Derderian of blessed memory.

As we extend our most sincere gratitude, we beg to submit to Your Majesty's kind consideration, that because the date of our official enthronment to the Holy See of Jerusalem will be fixed in the near future, we intend to visit the Armenian community in the Hashemite Kingdom of Jordan, where our people enjoy a safe, happy and prosperous life under Your Majesty's care and protection.

We would be much honoured if Your Majesty would grant us, on this occasion, the opportunity of presenting personally our heartfelt appreciation for the solicitous concern that Your Majesty always extends towards all communities.

Since the Armenian Patriarch of Jerusalem is also the spiritual leader of the Armenian community in the Hashemite Kingdom of Jordan, and enjoys all the ancient rights and privileges related to that responsible position, we request Your Majesty to kindly ratify these prerogatives by a Royal Decree as it has been the custom and tradition for several centuries.

We pray the Almighty to grant Your Majesty a healthy long life for the glory of God and the prosperity of the beloved land of the Hashemite Kingdom of Jordan.

Archbishop TORKOM MANOOGIAN
Armenian Patriarch of Jerusalem